Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 10

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստի

<<27>> հունիսի 2023թ. ք. Երևան

2023 թվականի հունիսի 27-ին տեղի ունեցավ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստը:

Հանձնաժողովի 6 անդամներից նիստին մասնակցում էին՝

Ա. Սիմոնյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ, հանձնաժողովի նախագահ
Ա. Խաչատրյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության պետ, հանձնաժողովի նախագահի տեղակալ
Ա. Ստեփանյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության լիցենզավորման և թույլտվությունների բաժնի պետ, հանձնաժողովի քարտուղար
Ռ. Այվազյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության բաժնի պետ, հանձնաժողովի անդամ:

Նիստը նախագահում էր հանձնաժողովի նախագահ Ա. Սիմոնյանը: Նիստից բացակայում էր հանձնաժողովի անդամներ Խ. Սողոմոնյանը և Տ. Գասպարյանը: Նիստն արձանագրում էր հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ո Ւ Մ

1.Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ներդիր տրամադրելու համար ներկայացված 3 հայտերի քննարկում:

2. Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու ներկայացված 2 հայտերի քննարկում:

3. Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիան և լիցենզիայի ներդիրն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված 1 հայտի քննարկում:

4. Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիայի ներդիրն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված 1 հայտի քննարկում:

1. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ներդիր տրամադրելու համար ներկայացված հայտերի քննարկում

1.1Քննարկվեց՝

Անհատ ձեռնարկատեր ԳԱՐԻԿ ԼԵՎԻԿԻ ԱՂՔԱՏՅԱՆԻ /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2023 թվականի հունիսի 16-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ Կազմակերպությունը 2023 թվականի հունիսի 16-ին ներկայացրել է հայտ և հայտին կից փաստաթղթեր՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու մասին՝ ՀՀ, Կոտայքի մարզ, համայնք Չարենցավան, ք. Չարենցավան, Ս. Շահումյան փողոց 49/4 գործունեության վայրում:

Կազմակերպության արտադրական բազայի ուսումնասիրությունն իրականացվել է Լիցենզավորման հանձնաժողովի անդամ Ա. Ստեփանյանի և Լիցենզավորման և թույլտվությունների բաժնի գլխավոր մասնագետ Ս. Գրիգորյանի կողմից:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

ԱՁ ԳԱՐԻԿ ԼԵՎԻԿԻ ԱՂՔԱՏՅԱՆ	4 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի N 690-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի և ՀՀ կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N 1565-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

1.2 Քննարկվեց՝

Անհատ ձեռնարկատեր ԱԶԱՏ ՎԱԼԵՐԻԿԻ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԻ /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2023 թվականի հունիսի 21-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ Կազմակերպությունը 2023 թվականի հունիսի 21-ին ներկայացրել է հայտ և հայտին կից փաստաթղթեր՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու մասին՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, համայնք Սևան, ք. Սևան, Ձկնորսների փողոց 11 գործունեության վայրում:

Կազմակերպության արտադրական բազայի ուսումնասիրությունն իրականացվել է Լիցենզավորման հանձնաժողովի անդամ Ա. Ստեփանյանի և Լիցենզավորման և թույլտվությունների բաժնի գլխավոր մասնագետ Ս. Գրիգորյանի կողմից:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

ԱՁ ԱԶԱՏ ՎԱԼԵՐԻԿԻ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ	4 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի N 690-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի և ՀՀ կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N 1565-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

1.3Քննարկվեց՝

«ԴՈՒՍՏՐ ԱՆԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2023 թվականի հունիսի 2-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ Կազմակերպությունը 2023 թվականի հունիսի 2-ին ներկայացրել է հայտ և հայտին կից փաստաթղթեր՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու մասին:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից հետո ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 2023 թվականի հունիսի 5-ի ՆՄ/25.1/16431-2023 գրությամբ Կազմակերպությանը տեղեկացվել է հայտում և հայտին կից փաստաթղթերում առկա թերությունների վերաբերյալ, մասնավորապես՝ առ այն, որ բացակայում են ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի N 690-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 9-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված հայտը՝ համաձայն N 1 ձևի և Կարգի 9-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված՝ տեխնիկական զննության համար նախատեսված տարածքների «Դուստր Անի» ՍՊ ընկերության օգտագործման իրավունքի վկայականի պատճենը: Ըստ N 096762 ստուգաչափման վկայականի՝ ստուգաչափված է MULLER 664-2 տեսակի արտաքին լուսային սարքերի լույսի ստուգման արատորոշման միջոց, մինչդեռ որպես արտադրողի կողմից փորձաքննության արդյունքները (տեխնիկական պարամետրերը) պարունակող տեխնիկական անձնագրի պատճեն ներկայացված փաստաթուղթը չի համապատասխանում ստուգաչափմամբ արձանագրված տեսակին, իսկ ըստ N 096113 ստուգաչափման վկայականի՝ ստուգաչափված է Инфракар Д1-3,01 տեսակի ծխաչափ, մինչդեռ որպես արտադրողի կողմից փորձաքննության արդյունքները (տեխնիկական պարամետրերը) պարունակող տեխնիկական անձնագիր ներկայացված է Мета 01 տեսակի ծխաչափի տվյալներ: Բացակայում է դողերի ստուգաչափված ճնշաչափերի հավաքածուի և կոմպրեսորի և նրա ստուգաչափված մանոմետրի առկայության վերաբերյալ տեղեկատվությունը:

Միաժամանակ Կազմակերպությանը տեղեկացվել է, որ ըստ «Լիցենզավորման մասին» օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասի՝ եթե պատշաճ ձևով նախազգուշացումը լիցենզավորող մարմնի կողմից ուղարկվելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում հայտատուն չի վերացնում հայտում կամ կից փաստաթղթերում առկա ոչ էական թերությունները կամ չի ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթեր կամ նյութեր, ներկայացված հայտը ենթակա է մերժման:

Կազմակերպությունը չի ներկայացրել լրացուցիչ նյութեր և չի վերացրել 2023 թվականի հունիսի 5-ի ՆՄ/25.1/16431-2023 գրությամբ նշված թերությունները:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյանին :

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

<<ԴՈՒՍՏՐ ԱՆԻ>> ՍՊԸ	0 կողմ, 4 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 1998-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է մերժման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

2. Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և ներդիր տրամադրելու համար ներկայացված հայտերի քննարկում

2.1 Քննարկվեց՝

<<ԱՐԱՄ ԳՐՈՒՊ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2023 թվականի մայիսի 11-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը և մայիսի 29-ին ի լրումն ներկայացված նյութերը՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և ներդիրներ տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ Կազմակերպությունը 2023 թվականի մայիսի 11-ին լիազոր մարմին է ներկայացրել սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և գազաբալոնների պարբերական վկայագրման ներդիրներ տրամադրելու հայտ՝ ՀՀ, Լոռու մարզ, համայնք Գյուլագարակ, գ. Ամրակից, Կենտրոնական փողոց 2/2 գործունեության վայրում: Կազմակերպության արտադրական բազայի ուսումնասիրությունն իրականացվել է լիցենզավորման հանձնաժողովի անդամներ Ա. Ստեփանյանի և Տ. Գասպարյանի կողմից կողմից:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

<<ԱՐԱՄ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ	4 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 1998-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

2.2 Քննարկվեց՝

<<Հ ԵՎ Լ ԳՐՈՒՊ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2023 թվականի հունիսի 2-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը և հունիսի 15-ին ի լրումն ներկայացված նյութերը՝ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ Կազմակերպությունը 2023 թվականի հունիսի 2-ին լիազոր մարմին է ներկայացրել սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիա և գազաբալոնների պարբերական վկայագրման ներդիր տրամադրելու հայտ՝ ՀՀ, Կոտայքի մարզ,

համայնք Չարենցավան, ք. Չարենցավան, Հոկտեմբերյան փողոց թիվ 3 գործունեության վայրում: 2023 թվականի հուլիսի 15-ին, ի պատասխան հայտում և հայտին կից փաստաթղթերում առկա թերությունների վերաբերյալ 13.06.2023թ. ՆՄ/25.1/16686-2023 գրության՝ Կազմակերպությունը ներկայացրել է լրացուցիչ նյութեր՝ վերացնելով նշված թերությունները:

Կազմակերպության արտադրական բազայի ուսումնասիրությունն իրականացվել է Լիցենզավորման հանձնաժողովի անդամ Ա. Ստեփանյանի և Լիցենզավորման և թույլտվությունների բաժնի գլխավոր մասնագետ Ս. Գրիգորյանի կողմից:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

<<Հ ԵՎ Լ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ	4 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 9-ի N 1998-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

3. <<ՊՐՈՖ-ԼԱԲ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման N ԳԲ 00066 լիցենզիայի N 0001 ներդիրն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված հայտի քննարկում:

Քննարկվեց՝

<<ՊՐՈՖ-ԼԱԲ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 27.06.2023թ. դիմումը՝ Կազմակերպության Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման N ԳԲ 00066 լիցենզիայի N 0001 ներդիրն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված դիմումը և դիմումին կից փաստաթղթերը՝ N ԳԲ 00066 լիցենզիայի N 0001 ներդիրի բնօրինակը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

<<ՊՐՈՖ-ԼԱԲ>> ՍՊԸ	4 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

4. Անհատ ձեռնարկատեր Լիաննա Վարդանիկի Սիմոնյանի Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման N ԳԲ 00071 լիցենզիան և ներդիրն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված հայտի քննարկում:

Քննարկվեց՝

Անհատ ձեռնարկատեր Լիաննա Վարդանիկի Սիմոնյանի 16.06.2023թ. դիմումն՝ անհատ ձեռնարկատեր Լիաննա Վարդանիկի Սիմոնյանի Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական

վկայագրման գործունեության իրականացման N ԳԲ 00071 լիցենզիան և ներդիրն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված դիմումը և դիմումին կից փաստաթղթերը՝ N ԳԲ 00071 լիցենզիայի և N 0001 ներդիրի բնօրինակները:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

ԱՁ ԼԻԱՆՆԱ ՎԱՐԴԱՆԻԿԻ ՍԻՄՈՆՅԱՆ	4 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի
նախագահի տեղակալ Ա. Խաչատրյան

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյան